



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

11.08.2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ՍՑ-19/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2016թ. թիվ 1/73-1/11815-16 գրությամբ ներկայացված «Արտահաս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06916615) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-19/16 բողոք), ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2016թ. թիվ 1/73-1/1367-16 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Ընկերության 27.04.2016թ. գրությունը, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Վանաձորի տարածքային հարկային տեսչության 25.04.2016թ. տեղեկանքը, ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-19/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 09.08.2016թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ներկայացրած փաստաթղթերի հիման վրա, 20.01.2016թ. թիվ 1/73-1/1367-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Արտահաս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 07.04.2016թ. թիվ 01/04.1/1419-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2016թ. թիվ 1/73-1/1367-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է «Արտահաս» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ, Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից **մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակցին ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Արտահաս» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 14.12.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2016թ. թիվ 1/73-1/1367-16 գրությամբ ներկայացված «Արտահաս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06916615) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.04.2016թ. թիվ 1/73-1/11815-16 գրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է կազմակերպել բողոքարկման գործընթաց:

2. «Արտահաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 26.01.2016թ. թիվ 01/04.1/153-16 գրությամբ դիմել է «Արտահաս» ՍՊԸ-ին:

«Արտահաս» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացրած 27.04.2016թ. գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 14.12.2015թ. չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության

վճարների գծով, միաժամանակ ներկայացնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Վանաձորի տարածքային հարկային տեսչության նոր՝ 25.04.2016թ. տեղեկանքը, համաձայն որի՝ «Արտահաս» ՍՊԸ-ն **14.12.2016թ.-ին (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** չունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, այլ ունի սոցիալական վճարի պարտավորություն՝ 124 ՀՀ դրամի չափով, որը հարկային պարտավորություն չի համարվում:

Ընկերությունը հայտնել է, որ ունեցել է գերավճարներ մի շարք վճարների գծով:

3. «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 26.01.2016թ. թիվ 01/04.1/154-16 գրությամբ դիմել է «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու):

Պատվիրատուն 02.02.2016թ. թիվ 18 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Արտահաս» ՍՊԸ-ն 2015թ. ճանաչվել է «հաց» չափաբաժնով որպես հաղթող մասնակից, որի արդյունքում կատարել է պատշաճորեն իր պայմանագրային պարտավորությունները:

4. ՍՑ-ԳԲԽ-19/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 09.08.2016թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2016թ. թիվ 1/73-1/11815-16 գրությամբ նախաձեռնված «Արտահաս» ՍՊԸ-ին (<ՎՀՀ՝ 06916615) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

5. ՍՑ-ԳԲԽ-19/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2016թ. թիվ 1/73-1/11815-16 գրությամբ ներկայացված «Արտահաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով

նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՎԵԽՊԳ-ՇՀԱՊՁԲ-15/2-2016» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արտահաս» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (14.12.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի 1.1 կետով որոշում է կայացվել Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով որպես ընտրված (1-ին տեղը զբաղեցրած) մասնակից ճանաչել «Արտահաս» ՍՊԸ-ին:

4. Պատվիրատուն, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Արտահաս» ՍՊԸ-ի կողմից 2015թ. դեկտեմբերի 14-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Արտահաս» ՍՊԸ-ն 2015թ. դեկտեմբերի 14-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1107 ՀՀ դրամի չափով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.12.2015թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով որոշում է կայացրել «Արտահաս» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

7. Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.04.2016թ. թիվ 01/04.1/1419-16 գրությամբ արձանագրել է «Արտահաս» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված

խախտման առկայությունը և խնդրել Նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

8. Ի պատասխան Կենտրոնի 07.04.2016թ. թիվ 01/04.1/1419-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, 11.04.2016թ. թիվ 1/73-1/11815-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել «Արտահաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

9. «Արտահաս» ՍՊԸ-ն 27.04.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 14.12.2015թ. չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, միաժամանակ ներկայացնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Վանաձորի տարածքային հարկային տեսչության 25.04.2016թ. տեղեկանքը, համաձայն որի՝ «Արտահաս» ՍՊԸ-ն **14.12.2016թ.-ին (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** չունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, այլ ունի սոցիալական վճարի պարտավորություն՝ 124 ՀՀ դրամի չափով:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-19/16 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

«Կուտակային կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի համաձայն՝ սոցիալական վճարը՝ սույն օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող նպատակային վճար է:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հարկատեսակներն են՝

ա) պետական հարկերը՝

- շահութահարկ,
- եկամտային հարկ,
- ակցիզային հարկ,
- ավելացված արժեքի հարկ:

Օրենքով կարող են սահմանվել վերոհիշյալ հարկատեսակներին փոխարինող հաստատագրված վճարներ, շրջանառության հարկեր կամ արտոնագրային վճարներ.

բ) տեղական հարկերը,

- գույքահարկ,
- հողի հարկ,
- հյուրանոցային հարկ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին ուղղված 31.07.2015թ. թիվ 1/73-1/20480-15 գրությամբ հայտնել է, որ պարտադիր սոցիալական ապահովության վճարները սահմանված են եղել «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով, որը գործել է մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը, հետևաբար «Կուտակային կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական վճարը չի համարվում հարկային պարտավորություն կամ պարտադիր սոցիալական ապահովության վճար:

Այսպիսով, «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎԵԽՊԳ-ՇՀԱՊՁԲ-15/2-2016» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին Ընկերությունը մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (14.12.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատուի, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի **«Արտահաս» ՍՊԸ-ն 2015թ. դեկտեմբերի 14-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1107 ՀՀ դրամի չափով:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հանգամանքը, 21.12.2015թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով որոշում է կայացրել «Արտահաս» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Արտահաս» ՍՊԸ-ի ներկայացրած ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Վանաձորի տարածքային հարկային տեսչության 25.04.2016թ. տեղեկանքը, համաձայն որի՝ Ընկերությունը **14.12.2015թ.-ին (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** չի ունեցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, այլ ունի սոցիալական վճարի պարտավորություն՝ 124 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ **«Կուրակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական վճարը չի համարվում հարկային պարտավորություն կամ պարտադիր սոցիալական ապահովության վճար**, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2016թ. թիվ 1/73-1/11815-16 գրությամբ ներկայացված «Արտահաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց


ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2016թ. թիվ 1/73-1/11815-16 գրությամբ նախաձեռնված «Արտահաս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06916615) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝




Հայրապետյան Գևորգ

Անդամներ՝



Խաչատրյան Գևորգ



Հակոբյան Ռաֆիկ